




ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 73

14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Տ Պ Ա Ր Ա Ն

"ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ,,Ի

Այսուհետեւ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաթերթը լոյս պիտի տեսնէ իրեն սեփական տպարանին մէջ: Տպարանս, զոր բազում զօհողութեամբ կանգնեց Ամենապ. Հոգեւոր Տէր, ըստ բաւականի ճոխ է և օր աւուր միշտ պիտի կատարելագործուի: Արդէն ի վիճակի է որ և իցէ սպազբական գործոց համար թէ ի Կ. Պոլիս և թէ գաւառներէ դիմողները պահանջներու:


Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրախրագիրներ, քարտեր, քարտ-տետրեր, մանագրներ ևն., ևն.:

Գիները անմրցելի կերպով ածած են:

Գեղեցիկատպական ճաշակի և տպագրական մաքրութեան հողմանէ ևս յաճախողները անտարակոյս գոհ պիտի մնան:

ՏՊԱՐԱՆ «ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ»Ի

Կ. Պոլիս, Բերա, 5 Պայրաւ փողոց 5



Երկրորդ ասի 14 Դեկտեմբեր 1912 թիվ 73

Անցեալ կիրակի օր, Դեկտեմբեր ամսոյս 8, Աւագ քեմիս քոյր եկեղեցեաց մէջ ժողովրդապէս եւ մեծաւորս, պաշտօնապէս հրատարակեցին Ամենապատիւ եւ Դեմեքանիկ Հոգեւոր Տեսուն մերոյ, Պօղոսի Պետրոսի ԺԳ. Պատրիարքի Տանն Կիլիկիոյ Կոնդակիւն բովանդակութիւնը, որով Նորին Վեհապիւնը իւր Աւագ քեմիս մէջ կը հրատարակէ եւ կը պատրաստէր ՆՈՐ ՏՈՄԱՐԻ գործածութիւնը: Այս տրամադրութիւնը ամենագովարի բան մըն է, այնու մօտ մանաւանդ որ Նոր կամ Գրիգորեան Տոմարը, հաստատած Գրիգոր Քահանայապետին Հռոմիայ, որ կը հակադրուի Յուլիան Տոմարին՝ կարգադրուած հեքսանոս Յուլիոս կայսրին Հռոմայ, սաստաքաշիւսիս զննութիւններով կասարուած ուղղութիւն մըն է, որ բարեկարգութիւն մտցուցած էր մանաւանդ եկեղեցական տներու օրհնումն եւ կասարմանը մէջ. ուղղութիւն՝ զոր փոյթ կամ անագան, հանցեալով ամէն քաղաքակիրթ ազգեր, շնորհունեցան եւ կը գործածեն, Կաթողիկէ, Բողոքական, նոյն իսկ անկրօն վարչութիւն ունեցողներն անգամ. իսկ Արեւելիի մէջ ամէն Կաթողիկէ ազգեր, առանց բացառութեան, կը գործածեն զայն: Նոյն տոմարը մեր քոյր ուղղափառ Կաթողիկոսներն գործածած են՝ իբր մին ի նշանաց միութեան

Հոռիկաց Ս. Եկեղեցւոյն հետ. եւ արդէն մեր քեներուն գրեթէ երեք չոր-
րորդն զայն ունի ի սկզբանէ կամ ի վաղուց հետեւ, ինչպէս նաեւ Միսիքաւ-
եան Միսրապիմոսիւնի: Եւր Տոմարը՝ քնաւ ազդեցութիւն չունի՝ ո՛չ ծեփ ո՛չ
ալ արարողութեան վրայ:

Հետեւաբար այսպիսի փափաքէի բարեկարգութեան մը Կ. Պոլսոյ Աւագ
քեմիկն մեզ եւս ներմուծութեան համար մեծապէս ուշադրեցաւ Կ. Աբձա-
գանգ քերթս ալ արագին բարեկարգութիւնները կը մասնաւորէ Եւրիկ
Գերեջանիկութեան, հայցելով կենաց Պարգեւատեան բարօրութիւն եւ յաջո-
ղութիւն՝ իւր բարեկարգական ձեռնարկներուն մէջ:

Ի ստորեւ կ'արտաստեմք Եւր Տոմարի հրատարակութեան Պատրիար-
քական Կոնդակը ակնողութեանը, ինչպէս նաեւ անոր հրատարակութիւնը
Ժողովրդապետաց հրահայող նամակը: Եւ քերթիս բովանդակութեան չլնասե-
լու համար, այս քիւր 24 էջ կը հրատարակեմք:

ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Կ. Պոլիս, Քերս, 7 Դեկտ. Ն. Տ. 1912

Թիւ 6542

Գեր. Տեր,

Ներկայեալ կ'առաջեմք Ձեզ մեր Կոնդակը, որով այսօրուրէն սխալ
պաշտօնապէս կը հրատարակեմք Եւր Տոմարի գործածութիւնը ու կը պար-
տադրեմք զայն մեր Կ. Պոլսոյ Աւագ քեմիկն մէջ:

Անոր պարունակութիւնը վաղը՝ Կիրակի, համառօտիւ եւ քերականի քե-
րէ՛ք ի գիտութիւն Ժողովրդեանը, եւ հրատարակեցիք Լոյնպէս քե անկիցապէս
հետեւեալ Բջ. օրը՝ 9 ամսոյս, զի Է Անարատ Յղութեան Կուսին եւ Շարաք
օրն ալ զի Է Ս. Գալիքայ Մծբնայ Հայրապետին:

Սոյն մեր տրուողութեան հրատարակութիւնը ծանուցիք ի պաշտօնէ նաեւ
Ձեր եկեղեցիկն յաճախող բախանայից:

Ի վերջոյ սիրոյ հաւատեմք եմք

Գերապատիւ Տեառնդ


Աղօթարար

(Ստորագրեալ) ՊՕԴԱՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

Ան Գեր. Տեր

Տ

Մեծ Ժողովրդապետ



**ՅԻՍՈՒՄԻ ԳՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՑ
ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.
ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ
ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳԱՀԷՆ ՀՈՈՎԾԱՅ**

ԹԻՒ 6542

Սիրեցեալ Հոգեւոր Որդւոց մերոց, Առաքելաջան աջակցաց,
Պե՛ր. Տ. Ժողովրդապետաց եւ Պատուական Վարդապետաց
Աւագ քեմիս Ողջոյն եւ Աստուածաւանդ Օրհնութիւն

Սիրեցեալ Որդեակի,

Յայտնի է ամէնուն թէ Ուղղափառ եկեղեցական դասը, իւր աստի-
ճանին վերաբերեալ նուիրական պաշտօնի գործադրութենէն զատ, օգ-
տաւար կ'ըլլայ հոգւոց եւ իւր եկեղեցւոյն նաեւ մտածելու եւ գործելու
միօրինակութեամբ: Վասն զի Ս. Եկեղեցւոյ ոգւոյն համաձայն միօրինա-
կութիւնն է որ աւելի եւս համերաշխ սիրով կը կապէ հոգւոց փրկու-
թեան եւ հառաքակութեան մը կրօնական եւ բարոյական զարգացման
համար աշխատող կղերք: Որչափ աւելի իրարմէ զատուինք սովորու-
թեամբ, կարծեօք եւ համոզմամբ, այնչափ աւելի իրարմէ կը հեռանանք

եւ այնչափ աւելի կը տկարանանք, եւ հետեւապէս չենք կրնար օգտակար ըլլալ ո՛չ հոգւոց փրկութեան, ո՛չ Ս. Եկեղեցւոյ, ո՛չ ալ մեր ժողովրդեան բարգաւաճման: Միօրինակութիւնը յառաջագիմութեան միջոցներ կը հայթայթէ եւ ամէն ձեռնարկները կը դիւրացնէ:

Մեր Հայ-Ուղղափառ փոքր հասարակութեան մէջ ի հոգեւորս եւ ի բարեկարգականս մտածելու եւ գործելու կերպերու մասին այնչափ անհամաձայնութիւններ կան որ ասոնք ամէնքը միօրինակութիւնը գրեթէ անկարելի կ'ընեն: Այս անհամաձայնութիւններուն գլխաւորներէն եւ տգեղներէն մէկն ալ Տոմարի զանազանութիւնն է: Հարիւր քսան հազարէ աւելի Հայ-Ուղղափառաց մեծ մասը հիմա ըստ նոր Տոմարի կը կատարէ իւր տօնական օրերը. իսկ փոքրամասնութիւն մը իւր միւս եղբայրներէ եւ կրօնակիցներէ զատուած, կարծես թէ իբր անջատ հասարակութիւն մը, իբր տարբեր կրօնքի հպատակ ժողովուրդ մը, տարբեր օրերով կը տօնէ Ս. Հաւատոյ ամենակարեւոր հիմնական յիշատակները: Մէկ մասը, զոր օրինակ, Զատիկական հանդիսութիւններով կ'ուրախանայ, իսկ միւսը Մեծ Պահոց սգաւոր արարողութիւններու ներկայ է:

Տասնութեց թեմեր ունինք մեր նուիրապետութեան մէջ, որոց տասնըմէկը՝ այս է Աղեքսանդրիա, Անկիւրիա, Ատանա, Բերիա, Մարաշ, Մարտին, Մալաթիա, Պրուսա, Սերաստիա - Նւդոկիա, Տրքրանակերտ եւ Քարբերդ, եւ ասոնց հետ եօթը կաթողիկոսական փոխանորդութիւններ՝ որ են, Բաբելոն, Դամասկոս, Երուսաղէմ, Զմիւռնիա, Զմիւռ, Պէյրութ եւ Տէր-էլ-Զօր, կը հետեւին նոր Տոմարի, իսկ մնացած հինգ թեմեր, Պոլիս, Էրզրում, Տրապիզոն, Մուշ եւ Կեսարիա հին տոմար կը բռնեն: Ասիէ աւելի անտեղի եւ տգեղ բան մը կարելի չէ երեւակայել. կա՞յ արդեօք աշխարհիս վրայ Քրիստոնեայ կամ ոչ-քրիստոնեայ ազգ մը, կրօնք մը, որ տարբեր տոմար գործածէ իր մէջ եւ իրարմէ տարբեր օրերով կատարէ իւր կրօնական տօնախմբութիւնները: Կարելի՞ է որ հասարակութեան մը Պատրիարքը, եպիսկոպոսները, քահանայները եւ ժողովուրդը եկեղեցական գլխաւոր հանդիսութեանց օրերը իրարմէ զատ կատարեն: Ահա մեր Հայ-Կաթողիկէ նուիրապետութեան վիճակը: Մենք ենք միայն աշխարհիս վրայ այն հասարակութիւնը որ այս զրգրազդ կացութեան մէջ կը գտնուինք: Ի՞նչ անիմանալի եւ ստորնացուցիչ հակասութիւն: Աւագ թեմի ստորակարգեալ թեմեր ունենան ընդհանուր Ս. Եկեղեցւոյ գործածած նոր տոմարը, իսկ Աւագ թեմը ամէն եկեղեցական բարեկարգութեան եւ յառաջգիմութեան օրինակ եւ կեդրոն, այսպէս յետադէմ մնայ, չի կարենայ ընդհանուր եկեղեցւոյ հետ կատարել իր տօները. եւ ամէնէն վերջ, օրեր եւ շաբաթներ անցնելէն ետեւ զանոնք սկսի: Այս անպատշաճութեան տգեղութիւնը աւելի երեւան կ'ելլէ, երբ մտածենք թէ այդ տօները ո՛չ թէ երկրորդական, այլ մեր Ս. Հաւատոյ էական եւ գլխաւոր հաւատարեաց տօներն են: Ահա

նաոր համար օտարներ եւ այլակրօններ անգամ զմեզ հակասութեան մէջ կը գտնեն :

Եթէ անգամ մը մեր մտածութիւնը դարձնենք քաղաքակրթեալ եւ քաղաքային Կաթողիկէներուն վրայ, պիտի տեսնենք հոն թէ ամէն Ուղղափառներ թէեւ այլեւայլ ազգութեանց պատկանին, իրենց գլխաւոր տօները միեւնոյն օրով կը կատարեն . սակայն առանց հեռուներ երթալու հոս ալ մեր երկրին մէջ, ամէն ուղղափառ արեւելեան ազգեր, զոր օրինակ Մարոնցիք, Ասորիք, Բաղդէացիք, Յոյն-Մելքիդք եւ Ղպտի հասարակութիւնները, ամէնքը մեր շուրջը, մեր քովը, ըստ նոր Տոմարի կը տօնեն : Ինչո՞ւ արդեօք մեր հասարակութիւնը միայն եզական ընթացք մը ունենայ, եւ այն ամէն արեւելեան եւ արեւմտեան ուղղափառ ազգերէն անջատուիլը բաւական չհամարելով, նոյն իսկ իր մէջ ալ բաժնուի եւ այսպէս մեծ մասը ըստ նորոյ վարուած ժամանակ, մաս մ'ալ ըստ հոյն ընթանայ : Ի՞նչ տգեղ տպաւորութիւն կ'ընէ այս անտեղի զանազանութիւնը, կրթեալ ազգերու առջեւ, եւ նոյն իսկ հասարակային կեանք մէջ ի՞նչ մեծ անտեղութիւններ յառաջ կը բերէ, եւ կրօնական տեսակէտով ալ ո՞րչափ միասակար է : Համառօտիւ պարզեմք այս մի քանի կէտերը : Միթէ Ս. Եկեղեցւոյ Գլուխը, Ս. Բահանայապետը, Բրիտոնեայ ուղղափառ ընտանեաց ընդհանուր Հայրը, չի՞ փափագիր որ իւր համատարած գերդաստանի վերաբերեալ Սուրբ եւ անմղաց յիշատակներ միեւնոյն եղանակաւ եւ օրերու մէջ կատարուին այն ընտանեաց անդամներէն, այլեւայլ լեզուներով եւ գեղեցիկ արարողութիւններով միեւնոյն հաւատոյ սկզբունքներուն վրայ համերաշխութեամբ միացած : Եւ ամբողջ Ուղղափառներու համար մեծ պատիւ, մեծ քաջութիւն մը չէ՞ միթէ իրենց անսխալ Գլխոյն, Բրիտոսի Սրբազան փոխանորդին հետ ի միասին կատարել այդ տօնախմբութիւնները եւ այն գեղեցիկ առիթներով միասնալ եւ մասնակցիլ այն Սրբազան Հօր սիրով լեցուն հայրական սրտին ղգացումներուն եւ անկէ բղխած երկնային օրհնութիւններուն : Միթէ հասարակութեան Կ. Պատրիարքը եւ եպիսկոպոսները իրաւունք չունին փափաքելու այս ցանկալի միօրինակութեան եւ հոգեւոր յարաբերութեան : Միթէ Աւագ Թեմի ուսեալ եւ առաքելական եռանդով վառուած կղերը ստիպեալ չէ՞ աշխատելու այս միօրինակութիւնը ձեռք բերելու համար, քանի որ միւս թեմերու կղերը այս մասին յաջողած է լիովին : Իրօք, ի՞նչ մեծ ջերմեռանդութիւն կը զգայ եպիսկոպոս մը կամ քահանայ մը, որ կը սիրէ իւր ժողովուրդը, երբ ապահով է թէ ճիշդ այն նուիրական օրերն են որոնց մէջ կատարուած են այդ սքանչելի, հոգեպարար, երկնային խորհուրդները, մինչդեռ բոլորովին անմիտութար եւ անզգայ կը մնայ, երբ յայտնապէս գիտէ թէ արդէն այդ սուրբ օրերը անցած են, եւ ինք կը տօնէ միայն փոքրամասնութեան մը հետ : Ասկից զատ այս դժբաղդ կենաց մէջ, այսչափ

դառն հալածանաց եւ վիշտերու մէջ մեր մէկ հատիկ միսթարութիւնը Սուրբ անմահ Պատարագը մատուցած ժամանակնիս չէ՞ որ կ'զգանք : Ի՞նչ սքանչելի եւ երջանիկ վայրկեաններ : Ահա ամէն առտու այն անմահ զոհին առջեւ երբ իրար զիրար եւ մեր սիրելի ժողովուրդը միտքերնիս բերենք , որչա՛փ աւելի մեծ պիտի ըլլայ մեր միսթարութիւնը , մեր ջերմեռանդութիւնը , երբ գիտնայինք թէ ամբողջ մեր հասարակութիւնը , Սրբազան Քահանայապետի հետ , բոլոր ուղղափառ աշխարհի հետ նոյն տօնը ի միասին կատարելու վրայ է , նոյն սուրբ խորհրդածութիւններով կ'զբաղի , նոյն սքանչելիքներուն հիանալի եւ զմայլեցուցիչ մտածականներու բարձրացուցած է իւր միտքը : Ո՛հ , այն ատեն հոգեւոր հովիւներու եւ ամբողջ կղերական դասու սրտէն երկնային օծումով լի խօսքեր պիտի բլխէին եւ առ ժողովուրդն պիտի ուղղուէին , այն սուրբ տօներու առթիւ , եւ այն նուիրական օրերու շնորհքը բոլոր ժողովրդեան վրայ մաղթելու սրտարուղի աղօթքներ պիտի բարձրանային մինչեւ երկինք : Ո՛հ , մեր հասարակութեան մէջ որչա՛փ հոգեւոր արդիւնքներ յառաջ պիտի գային այս միութեամբ , որչա՛փ յառաջ պիտի երթայինք եկեղեցական բարեկարգութեան մէջ :

Այո՛ , սիրեցեալ որդեակք , կրօնական տեսակէտով ալ մեասակար է բռնիք մեր այդ անջատումը եւ անհամաձայնութիւնը : Վասն զի վերոյիշեալ պատճառներէ զատ , զիտէք որ ջերմեռանդ ուղղափառի մը համար իրօք մեծ կորուստ մըն է , երբ ընդհանուր եկեղեցւոյ Ս . Գլխէն եւ ուղղափառ ժողովրդէն զատուելով , այդ օրերուն վերաբերեալ հոգեւոր օգուտներէ , պատարագներէ , Ս . ներողութիւններէ , եւ միութեան եւ համաձայնութեան զգացումներէ ալ զրկուի : Այս պատճառաւ է որ ճշմարիտ ջերմեռանդութիւնը երթալով կը պաղի մեր ժողովրդեան մէջ եւ ուղղափառ բարի սովորութիւններ կը մոռցուին եւ կ'անհետանան , այս դարուս ապականութեանց դէմ մաքառելու պէտք եղած միութիւնը պակսելով , եւ հոգեւորէն օգտուելու միջոցներ մերկններու մէջ տկարանալով : Այո՛ , լաւ համոզուինք , Ընդհանուր Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ գանուող այնչափ հասարակութիւններէ քիչ չատ հեռացած եւ հետեւաբար հոգեւոր գրգիռներէ զրկուած ըլլալովնիս , ժողովուրդը քնականաբար կը հեռանայ հետզհետէ Կաթողիկէ Եկեղեցւոյ երկնային եւ կենսատու ոգիէն , Անոր ճշմարիտ եւ գործնական ջերմեռանդութենէն , Անոր մէջ զարգացող բարեպաշտական եւ եղբայրսիրութեան օգտակար գործերէն . եւ այսպէս , ուղղափառ համայնքին հաւատքը վառ պահող ոգեւորումի առջեւ անտարբեր կը մնայ , եւ կը թուլնայ վերջապէս հոգեւոր պարտականութիւններէն : Այս ալ ուշադրութեան արժանի կէտ մ'է : Սիրեցեալ Որդեակք , քանի որ հոգեւոր տօները կրօնքի կը պատկանին եւ ո՛չ ազգութեան , եւ քանի որ տօներն զրուած են ջերմեռանդութիւնը եւ Քրիստոնէական հաւատքը կենդանի պահելու համար , մենք ընդհանուր

եկեղեցւոյ հետ զանոնք չի տօնելով, որոնց հետ կը տօնենք. լաւ մտածենք, այդ միջավայրը ուր մեր ժողովուրդը կը գտնուի: Գէթ մենք փոքրաթիւ հասարակութիւն մը, մեր հալածուող եւ մարտիրոս նախնեաց պէս ուրիշներու բարի օրինակներ տայինք, քրիստոնէավայել վարքով:

Վերոյիշեալ այդ ամէն խորհրդածութիւններէ զատ, պարագայ մ'ալ կայ որ կը ներկայանայ մեր ուշադրութեան, որն որ թէեւ արտաքին՝ սակայն իւր կարեւորութիւնն ունի:

Հին տոմարի գործածութեամբ մենք եւրոպական ճշմարիտ քաղաքակրթութեան այնչափ սիրահար եւ հետամուտ եղող Աւագ թեմի ժողովրդեան Քահանայքս, այս լուսաւորեալ դարու քաղաքակրթութեան գլխաւոր ազդակէն զուրկ մնացած ազգի մը վիճակն ունինք. Մենք արեւելեան ազգերու մէջ ամենէն աւելի զարգացման եւ քաղաքակրթութեան ընդունակ արեւելեան ժողովուրդ մը ճանչցուած ենք, մենք կրթեալ ազգերու հետ ունինք կրօնական, գիտական եւ վաճառականական մշտատեւ յարաբերութիւններ: Արդ, ինչպէս կարելի է որ այդ քաղաքակրթութենէ զուրկ քաղաքներու եւ գիւղերու խեղճ եւ տգէտ ժողովրդեան պէս, մեր այս զարգացեալ ժողովուրդը հեռացած ֆնայ այսգիւսի յառաջադիմութեան քայլէն: Միթէ ամենուն ծանօթ չէ՞ նոր տոմարի ուղղութիւնը, եւ քաղաքակրթեալ աշխարհի մէջ թէ՛ կաթողիկէ ժողովուրդներ ամբողջովին, եւ նոյն իսկ ո՛չ-կաթողիկէից ամենաստուար մասը, նոր տոմարի չեն հետեւիր: Այս վերջին ժամանակներս նոյն իսկ ձեռնացիք յառաջադիմութեան ձեռնարկով մը բոլոր աշխարհի մեծ եւ սքանչելի օրինակ մը չի տուին, ընդունելով նոր տոմարը: Եւ նոյն իսկ մեր Օսմանեան կառավարութիւնը իւր Մերակոյտին մէջ եւրոպական ժամացոյցի դրութիւնը ընդունելէ վերջ, վիճաբանութեան առարկայ չ'ըրա՞ւ նոր տոմարը եւ զայն ի մօտոյ ընդունելու բացարձակ տրամադրութիւն չի յայտնեց:

Սակայն մենք պէտք չունինք եկեղեցական բարեկարգութեան գործոյն մէջ արտաքին պատշաճութեանց զիմելու: Մեր նպատակն է մի միայն մեր սիրելի ժողովրդեան հոգեւոր բարիքը, եւ ջերմեռանդութեան մէջ անոր յառաջացումը. մի եւ նոյն ժամանակ միօրինակութիւն տեսնել կ'ուզենք մեր Հայ-Ուղղափառ հասարակութեան եկեղեցիներուն մէջ տոմարի մասին, եւ կը փափաքինք որ Կաթողիկոս-Պատրիարք, Արքեպիսկոպոսունք, Եպիսկոպոսունք, Քահանայք, ժողովուրդք, ամէնքնիս ի միասին կատարենք մեր Սրբազան եւ Տէրունական տօները Ընդհանուր Կաթողիկէ Եկեղեցւոյն հետ, միանալով միանգամայն երկնից արքայութեան հրեշտակներուն եւ Սուրբերուն:

Բայց, զգուշացէք, Սիրեցեալ Որդեակք, մենք մեծ չարամտութիւն, ողբալի տգիտութիւն կը նշմարենք այն ամէն խօսքերուն մէջ որ կ'ըլլան միամիտները խաբելու եւ եկեղեցական իշխանութեան գէժ ժողովուրդը

ապստամբեցնելու համար։ Այսպիսի պարագայներու մէջ սովորութիւնս եղած է յառաջագիմութեան, բարեկարգութեան եւ ջերմեռանդութեան ձեռնարկներուն չար մեկնութիւններ տրուիլ, եւ հինցած զրպարտութիւն մը մէջ տեղ բերելով այսպիսի բաներու մէջ լատինականութեան միտումը եւ գաղափարը մատնանշել։ Այսպիսի չարամտութիւններուն կրնանք ամէնքնիս ալ պատասխանել, եթէ արժէ պատասխան տալ։ Ո՛չ, այսպիսի ձեռնարկներ ժողովուրդը լատինացնելու համար չեն, այլ միայն միօրինակութեան եւ ջերմեռանդութեան նպաստելու համար։ Կարելի բան չէ որ արեւելեան ազգ մը լատինանայ։ Մեր աչքին առջեւ են միւս արեւելեան ազգերը. վերոյիշեալ Մարոնիք, Ասորիք, Մելքիթք, Քաղդէացիք եւայլն, որոնք դարերէն առդին նոր տոմարով կը վարուին եւ չեն լատինացած։ Ասկից զատ մեր նուիրապետութեան վերոյիշեալ տասնութէկ թեմերը եւ եօթն կաթողիկոսական փոխանորդութիւններ այնչափ տարիներէ ի վեր նոր տոմարի կը հետեւին։ Կը հարցնենք, արդեօք ասոնցմէ որոնք լատինացան։ Ո՛չ, Սիրեցեալ Որդեակք, մեր ժողովուրդը չի խաբուի, լաւ մեկնեցէք ամէնուն՝ ճշմարտութիւնը։ Ապահով ենք, Հռովմայ Ս. Եկեղեցին մեծ կարեւորութիւն կուտայ այլ եւ այլ արարողութեանց մէջ գտնուող հասարակութեանց, եւ անոնց ծէսը եւ արարողութիւնները անվթար կը պահէ։ Վասն զի Նա՝ Աստուածային իմաստութեամբ հաստատուած եւ անփոփոխելի օրէնքներովը կը կառավարէ իւր հոգեւոր իշխանութեան տակ գտնուող ամբողջ ազգերը։ Ամէն տեղ կը փարատէ պգիտութեան խաւարը, պաշտպան եւ ծաւալող է ճշմարիտ քաղաքակրթութեան, ամէն միտքերը կը լուսաւորէ ուղիղ գիտութեամբ. ամէն տեսակ զարգացման կ'առաջնորդէ։ Ըշմարտութեան միակ աղբիւր եւ կեդրոնն է. Նա՝ միայն ունի երկնային սկզբունքներ որ կարող են մարդկային ազգը երջանիկ ընել, նաեւ այս աշխարհիս մէջ։

Ահա այս Եկեղեցին է որ իւր Աստուածային Հիմնադիրէն խոստում ընդունած է իւր վարդապետութիւնը մինչեւ աշխարհքիս վերջը շարունակելու. «Ես ընդ ձեզ եմ մինչեւ ի կատարած աշխարհի»։ «Դրունք դժոխոց գնա մի՛ յաղթահարեացեն»։ «Որ անկցի ի վերայ վիմիս այս սորիկ՝ փշրեսցի, եւ յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ գնա»։ Մինչդեռ այն Ս. Եկեղեցիէն եւ Անոր տեսանելի Գլխէն, Հռովմայ Սրբազան Քահանայապետէն զատուողներն են որ բունէն կտրուած եւ անջատուած ճիւղերու պէս, կենդանութեան հիւթը կորսնցուցած ըլլալուն՝ ճշմարիտ յառաջագիմութենէ զուրկ են, անպտուղ կը մնան եւ կը չորնան։ Այո՛, միայն Ուղղափառ Սուրբ եւ Հռովմէական Եկեղեցւոյ սերտիւ միացած մնալով պիտի ծաղկինք, պիտի լարգաւածինք, եւ ամենայն բարեկարգութիւններով պիտի ապահովենք մեր հասարակային կեանքը եւ գլխաւորաբար մեր յաւիտենական փրկութիւնը, որուն համեմուտ համար միայն

ստեղծուած ենք ամէնքնիս, եւ ասոր համար Հոովմէական Եկեղեցւոյ զաւակ ըլլալու մեծ շնորհքը ընդունած ենք:

Ահա այս ամէնը ի նկատի առնելով, Սիրեցեալ Որդեակք, որոշեցինք մեր այս Շրջաբերական թղթով եւ կ'որոշենք որ մեր Աւագ Թեմն ալ ասկից կտեւ հետեւի նոր տոմարի, եկեղեցական տօներու եւ հանդիսութեանց մէջ, որուն ի խղճէ կը պարտաւորենք Աւագ Թեմի թէ՛ վանական եւ թէ՛ աշխարհիկ կղերն, թէ՛ թեմական եւ թէ՛ օտար կամ հիւր քահանայները, եւ սկսեալ Շրջաբերականիս իւրաքանչիւրին հասած օրէն, կը պարտաւորենք որ իւրաքանչիւր Հայ-Կաթողիկէ քահանայ նոր տոմարի հետեւի, թէ՛ Պատարագ թէ՛ Ժամերգութիւն ըսած արեւն եւ կամ որ եւ իցէ եկեղեցական հոգեւոր պաշտօն, արարողութիւն եւ կամ հանդէս կատարած ժամանակ, Աւագ Թեմիս եւ ասոր իրաւասութեան տակ գտնուող ժողովրդապետութեանց մէջ, որ եւ իցէ եկեղեցիներու կամ նոյն իսկ առանձնական մատուռներու եւ առանձին միաբանութեանց պատկանող ազօթատեղիներու մէջ: Ապահով ենք այս տրամադրութիւնը մեր մէջ միութեան, զազափարաց համաձայնութեան եւ սիրոյ նոր զգացումներ արթնցնելով, այդ սուրբ տօներու առթիւ Աստուծոյ շնորհքը եւ օրհնութիւնը առատապէս ընդունելէն զատ, մեզի պիտի ներշնչէ յառաջադիմութեան փափաքն ալ, որով մեր հասարակութիւնը արեւելքի մէջ կրթեալ եւ յառաջադէմ հասարակութեանց թուոյն վերաբերելով, իւր բարութեան, քրիստոնէական հնազանդութեան եւ զարգացման այդ ցանկալի ապացոյցը պիտի տայ հրապարակաւ ի յիշութիւն ամենեցուն:

Կը խնդրենք վերջապէս, Սիրեցեալ Որդեակք, որ այս ամէնը կիրակի օրեր Ս. Պատարագներու միջոցին հետզհետէ մեկնէք մեր սիրելի եւ յառաջադիմասէր ժողովրդեան եւ զիրենք յորդորէք օգտուելու Ս. Եկեղեցւոյ անգին գանձերու հոգեւոր առատութիւններէն: Վստահ ենք որ ամէնքը մերձակայ փառաւոր եւ տնօրինական տօները պիտի փառարեն ամենայն սրբութեամբ, եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս պիտի պարգեւէ ամենուն մեծամեծ բարիք եւ երկնաւոր պարգեւներ: Այս հաստատ յուսով կը մաղթենք Աստուծոյ օրհնութիւնը Ձեզի, Սիրեցեալ Որդեակք, եւ ձեր առաքելաշնչական վաստակոց յանձնուած ուղղափառ հոգւոց:

Տուեալ ի Կաթողիկոսարանես ուր ի Բերա Կ. Պոլսոյ, յ7 Դեկտ.ի 1912,
եւ Պատրիարքութեանս մերոյ յԵրրորդում ամի:

(Ստորագրեալ) ՊՕՂԱՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆՆ ԿԻՒԻԵԻՈՅ

ԳԷՈՐԳ Ծ. Վ ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻԻԱՆԱՊԵՏ

ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

Զ

ԶՄԻՌՆԱՅԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԲԻ ԵՒ ԻՐԵՆԵՐՈՒՆ
ԽՍՆԴԱՎԱՌ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

(Շար.)

1707, Հոկտեմբեր 21ին, որ էր երեքշաբթի, արդէն ամենայն ինչ պատրաստուած էր Տէր Կոմիտաս Քահանայն ձերբակալելու համար: Ինչպէս ըսինք, գառնուկի մորթ կրող այն գիշափնը, Եպարքոսը առատ կաշառքով որսացած էր, եւ ունէր իրեն դորձակից չորս քահանայներ, որոնք իրեն պէս հակառակասէր, անբարոյ, անգութ եւ վայրագ էին: Յսոնցմէ զատ, կային նաեւ շատ մը եկեղեցականներ, որք թէեւ այդ եղևոնագործութեան մէջ համամիտ չէին, սակայն իր բռնակալութեան երկիւղէն գէթ առ երեսս իրեն միաբանած էին, եւ ուրիշ կարգ մը աշխարհիկ սննդոր եւ սրիկայ մարդիկներ, որոնց մէջ այս անգամ ներկայ չէր այն Ադրիանուպոլսեցի սրիկայ Վօսինոյ անուն երիտասարդը, որ միւս րնկերներէ յանդգնագոյն ըլլալով, առաջին յարձակման ժամանակ Տէր Կոմիտասին երեսը ուժգին ապտակ մը զարնելովն երկու աչքերն անմիջապէս կուրցեր եւ իւր արժանի պատիժը ընդուներ էր: Այս դժոխային գունդը, արքունի հրովարտակը կրող իրենց աւսողակապետ եւ ծպտեալ Յովհաննէս պատրիարքին առաջնորդութեամբ, որ զինուորի տարազ հագած եւ Մուհիբ աղայի գունդը եւ Ամիրայի եւ Եպարքոսի սպասաւորներէն շատ մը մարդիկ հետը առնելով, նոյն աւուր գիշերուան Ը. Թ. Ժամը 3ին, Տեառն Կոմիտասայ Քահանային բնակարանը պաշարեցին: Այդ ժամուն արդէն Վլանկայի փողոցներուն մէջ երթեւեկը դադարած եւ ամէն մարդ իր տունը քաշուած եւ եւ ճրագներն իսկ մարած էին, տեղ տեղ թէեւ տուներու մէջ բացառաբար պատուհաններու վարպոյրներու ետեւէն մարդու ստուերներ կը նշմարուէին, այսուհանդերձ առհասարակ խոր լռութիւն մը կը տիրէր: Տէր Կոմիտասի դրան ուժգին բաղխումը, զոր առ ի փորձ եւ ի ստուգութիւն կը կատարէին առանց հաւատք ընծայելու պահիկ մը առաջ զինք տեսնողի, յանկարծ արձագանգ գտաւ մերձակայ լուռ թաղերու մէջ այնպէս, ինչպէս երբ հանդարտ եւ քնացող լճի մը մէջ քար մը կը նետուի, որ նախ փոքրիկ կլո-

բաձեւ չըջանակ մը կը բանայ, որ հետզհետէ կ'ընդարձակի եւ քաշուելով մինչեւ որ եզերքները հասնելով կը մարի: Այդ բաղխումէն առաջին արթնցողը Տէր Կոմիտասն եղաւ, որ նոյն իրիկուն սովորականէն աւելի երկարելով աղօթքները, գրեթէ նոր անկողին մտած եւ յոգնած աչուները քնոյ գոցած էր: Եւ խկոյն խաւարի մէջ պատուհանը բանալով, ո՞վ է, ի՞նչ կ'ուզէք, ըսաւ: Թշնամիք ձայնէն ճանչցան թէ ինքն է եւ չի սպասեցին որ դուռը բանայ, ոտուըններով, ծունկերով, արմուկներով դուռը փշրելին ներս խուժելով եւ առանց այլեւայլի վրան յարձակելով ձեռուընները ետեւէն կապել կաշկանդելին մէկ եղաւ: Լապտերներու աղօտ լոյսէն, Աստուծոյ ծառան ճանչցաւ իր վրայ յարձակողները: Ծանչցաւ Տէր Յակոբ քահանայն, Տէր Սահակը, Տէր Նայիրն եւ Տէր Մարկոսը, որ իրեն նախկին աշակերտն էր, սրուն շատ ալ բարիքներ ըրած էր, եւ նա հակառակ ընդունած այնքան բարիքներու, ապերախտութեամբ Յուդա մը եղած՝ զինք կը մատնէր: Ծանչցաւ առնոց մէջ նաեւ Յովհաննէս պատրիարքը, որ չճանչցուելու համար մահմետական զինուորի զգեստ հագած էր: Ծանչցաւ նաեւ շատ մը ուղղափառ աշխարհիկ մարդիկներ, զորս նախապէս ձերբակալելով իրենց հետ կը քաշկռտէին: Կ'ուզէին զինք անպատասպար վիճակի մէջ տնէն դուրս հանել, սակայն Աստուծոյ ծառան աղաչեց որ զգեստները հագուի, եւ անոնք թոյլ չտուին եւ անարգանօք հրմշտկելով վար կ'իջեցնէին: Այս յանդուգն յարձակման միջոցին արդէն Տէր Կոմիտաս ընաւ ընդդիմութեան նշան չէր ցուցուցած, նա մանաւանդ յարձակողներուն ըսած էր թէ՝ «Դուք զիս կը փնտռէիք, ահա ես եմ. սակայն այս մարդիկներէն ի՞նչ կ'ուզէք, — ձերբակալուած ուղղափառներուն ակնարկելով, — թողէք որ իրենց տեղ երթան» (Ֆէրիոյ գեսպան իր նամակներուն մէջ): Եւ խկոյն իւր շուրջ եղող թշնամիներէն մին Երանելուոյն զգեստը բերելով վրան նետեց եւ հագուած ժամանակ, կրտսեր որդին հեծկտանօք բառեր մը կ'արտասանէր, եւ Երանելին՝ երբ զայն միութարելու համար, «Մանչ», մի՛ լար, ես զքեզ արդէն Աստուծոյ յանձնած եմ, եւ ո՞վ գիտէ թերեւս քեզ տեսնելու եւ գրկելու համար նորէն կը վերադառնամ», կ'ըսէր, յանկարծ յանդուգն Յովհաննէս Պատրիարք, մերձենալով Երանելուոյն երեսը ուժգին ապտակեց, ըսելով. «Ի՞նչ, տակաւին կը յուսամ տուն վերադառնալ», եւ Երանելին առանց ձայն հանելու, միւս երեսը դարձուց ըստ աւետարանական խրատուց, իսկ պատրիարքն նոյն սաստիկութեամբ կրկնեց իւր ապտակը, որու հետեւանօք Տեառն Կոմիտասայ Բահանային երկու ակռաները բերնէն խկոյն դուրս խուժեցին: Պատրիարքին չար օրինակին հետեւեցան բարբարոսաբար, աւանդ, միւս հրէշները. աքացի եւ բռնցի հարկանելով: Այդ անարգանաց՝ Աստուծոյ ծառան բերանը չբացաւ, այլ գլուխը ծռելով «Իբրեւ զոչխար ք սպանդ վարեալ», առջեւին ինկաւ անմեռնչ եւ ճամբան շարունակեց մինչեւ

պատրիարքական փոխանորդ Տէր Մարկոս , Չամբ-Փռնտուգ կոչուած քահանային տունը , ուր սակաւիկ մի հանդէլ ուզելով , վայրենիները , Տէր Կոմիտասը զինուորաց հսկողութեան յանձնելով , իրենք զինուոյ բաժակներ պարպեցին անյագարար եւ շատ մը ըմպելէ յետոյ , կատարած վայրագ ասպատակութենէն զոհ եւ զուարթ պարել եւ Երանելուն Ս . երեսը թքնել սկսան : Հոս իրաւամբ կրնար երգել Տէր Կոմիտաս , Սաղ-մոսերգուն՝ Քրիստոսի Աստուածորդուն համար տողած այն խօսքերը . «Զիս այսն առնէին ոյք ըմպէին զզինի , ես յաղօթս կայի առ քեզ Տէր ի ժամանակ ընդունելի» (Սաղմ . 68) :

Այդ բոլոր մանրամասնութիւնները ճշմարտապէս ցաւ ի սիրտ կը յիշեմք եւ երբէք յիշակութեան կամ մեր բաժանեալ եղբարց սիրտը վիրաւորելու ոգւով չէ որ կը պատմեմք , այլ մեզ մտրակողը ճշմարտութիւնն է , որ կ'ղեղէ փայլիլ արեգական ճառագայթներուն պէս եւ փառաց կրկին պսակ յաւելուլ այն մարտիրոսական անմահ պսակին , որուն արժանացաւ պանծալի Ախոյեանին հաւատոյ՝ Տեառն Կոմիտասայ Քէօմիւրճեանց վեհ հոգին :

Հոս , մեր սիրելի ընթերցողաց խորին ուշիմութեան կը ձգենք այն նմանութիւնը՝ պատմութեան Տեառն Կոմիտասայ Քահանային , շատ մը պարագաներովը , այն տիեզերահռչակ եւ Աստուածամարդ Քրիստոսի վարուց եւ մանաւանդ նորա կենացը վերջին չարչարանաց երեք օրերուն , զորս Աւետարանիչք անմահ գրչով կը նկարագրեն եւ համայն քրիստոնեայ աշխարհը մէն մի տարի կատարեալ զգացմամբ եւ զգածմամբ անոր կենդանի յիշատակը նորոգել կը ճգնի , սակայն չի մոռնար անցեալի , եւ նաեւ ներկայիս անթիւ անմեղ հոգիները որոնք ոգւով չափ կ'ատեն ոմանց կողմանէ կրից յուզմամբ կատարուած չարագործութիւնները , եւ որոնք արհամարհեցին եւ կ'արհամարհեն ի սպառ այն տեսակ մարդկութեան հրէշներուն անորակելի եւ յոռեգոյն արարքները :

Եւ նոյն իսկ մենք , մեր պատմութեան մասին , մեր՝ թէեւ բաժանեալ , բայց միշտ եղբայրներն եղող ընդհանուր Հայերուն նահատակիս հանդէպ տածած սիրոյ եւ մեծարանաց զգացմանցը ականատես վկաներ եմք , եւ պատմութիւնս իր կարգին չպիտի զանց ագնէ ցուցադրելու ակն յայտնի ոչ թէ միայն ներկայ ժամանակուան մարդիկներուն՝ այլ նոյն իսկ Տեառն Կոմիտասայ ժամանակակից ողջամիտ արտայայտութիւնը ազգայնոց :

(Շարունակելի)

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՐԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Ա.

ՓՐԿՁԻՆ ԱԶԳԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

(Մատթ. Ա. 1—17.—21 Հմմ. Կռկ. Գ. 23—26)

(Շար.)

Բ. 1. Բանն Աստուած, յաւիտենական և անհաս, հաւասար և համագոյ Հօր, Լոյս ի լուսոյ և էից էակ, կը պարփակի յարգանդ Սրբոյ Կուսին, և կը ծնանի մարդ կատարեալ, և նախնիք ունի զԴաւիթ և զԱրքայամ և ուրիշ Նահապետներ, ու ամէն տեսակ մարդիկ, հովիւներ, քաջամարտիկ նահատակներ, թագաւորներ, բանաստեղծներ, սուրբեր, մեծ մեղաւորներ, խեղճ արուեստաւորներ, «Ամսաքի ծառայութեան երկրէ» (Ես. ԽԳ. 2), եւ որ տեսչիկն եւ սոսկալի է, եւ զկանայսն զորոց յիշգրտ զանուանս» (Ոսկ.): Ահա մինչեւ որ աստիճան ինքը զինքն խոնարհեցուց տիեզերաց Արարիչը: «Ու նայնացոյց զանձն»: Ուստի մենք ալ և ոչ բան մը մեզի համար խոնարհագոյն կարծեւ չու ենք:

2. Քրիստոսի Տեառն մերոյ այս անմասն խոնարհութիւնը՝ մեզի հպմար թանկագին դասներ յառաջ բերաւ: Աստուծոյ Որդին անուանուեցաւ՝ «Ողի Դաւթի», որպէս զի դու կարենաս կոչուիլ «Ողի Սոսուծոյ եւ ժառանգ»: Նա իր ստեղծութիւնները, իւր ծառայները՝ իրեն հայր և նախահայր անուանեց, որպէս զի դուն որ ծառայ եւ և գերի, կարող ըլլաս «Հայր» կոչել քու Տէրդ և Ստեղծողդ:

3. Ո՛րքան մեծ և հրաշալի է փառքն անոնց որ կ'անուանուին Նախահայրք Քրիստոսի. բայց ո՛չ նուազագոյն, այլ առաւելագոյն իսկ է մեր փառքն ալ որ Քրիստոսի ազգ և սերունդ ենք: Քրիստոսեանքաւ Մենք Քրիստոսի որդիք ենք: աստուածեղէն ընտելեանն հաղորդակիցք (Բ. Պետր. Ա. 4.). մենք Քրիստոսի եղբարք ենք (Յովհ. Ի. 47.). Անոր սիրելիներն ենք (Դուկ. ԺԲ. 4.). Անոր մտերիմ բարեկամներն ենք (Յովհ. ԺԵ. 14-15.), որոնց վրայ Նա իր անձն իսկ դրաւ մինչեւ ի մահ խաչի. պատուեց զմեզ իր աստուածային անհասանում՝ զանձերով ու շնորհքներով: Նախնաձախդիր ըլլանք այս անգուգական վերակոչումներն անրիժ պահպանելու:

4. Ճշմարիտ զղջումն եւ անկեղծ ապաշխարութիւնը կը վերահաստատէ ամէն հոգեւոր իրաւունքներու մէջ, անկեալը կը վերականգնէ ի շնորհս. այսպէս եղաւ Քրիստոսի նախամայրերուն որ ի վեր անդր յիշուեցան: Քարոզեցի Ողումվդ Ասուծոյ՝ Հօր քաղցրութիւն, որ զանաւակ որդին մեծեցոյց ի հայրենի ժառանգութիւնն, եւ զպառնիկսն յառաջեցոյց յեկեկային արեւայութիւն արդարոցն երանութեան» (Ս. Գր. Նարեկ. Բան ԼԳ.): Կը վերասացնէ շնորհք, արդիւնք և վարձք. բայց յարատեւութեան պայմանաւ: Սակայն այս վերականգնումն և յարատեւութիւնը կը հիմնուի խոնարհու-

Թեան վրայ. հպարտ Փարիսեցին կ'անարգուի, խոնարհ Մաքսաւորը կ'արդարանայ. Ոչ ոք մեծագոյն է քան զՔրիստոս որ «խոնարհեցոյց զանձն»: Որչափ մեծ էս, որչափ գիտուն կամ ունեւոր, այնչափ աւելի խոնարհէ՛. «Զի մեծի ումեք՝ աւելի այն փառք են, յորժամ խոնարհիլ կարիցէ» (Ոսկ.): Ո՛չ մէկ բան Աստուծոյ այնքան սիրելի է՝ որչափ երբ մէկը զինքն յետինը կը համարի. այս է ահա իմաստութեան սկիզբը. «Տայ շնորհս խոնարհաց»: — «Զխոնարհս բարձրացոյց»:

5. Պէտք չէ մեծամտիլ իր ազգատոհմին կամ գերդաստանին անուանութեանը վրայ. պարզապէս ունայնամտութիւն է այս: Ո՛չ պարծինք ո՛չ ցաւինք մեր նախնեաց դործերուն վրայ. այլ աշխատինք ճոխանալ մեր անձնական առաքինութիւններով: Այն անիրաւ Հրեաները՝ որ Աբրահամաւ կը ստեղծուին, Յիսուս «սասանայի որդիք» կոչեց (Յովհ. Ը. 33-4. 44.): Ըլլաւ ծառայ կամ ազատ, ոչինչ խտրէ Քրիստոսի մօտ. չես աւելի կամ նուազ բան մը. քանզի «Մի ինչ է պիտոյ, բարբ արքայսդ եւ ողիք անմեղք: Այն առաւել պայծառագոյն է՝ որ չիցէ ի պիտանեաց նախնեաց եւ լինիցի առաքինի» (Ոսկ.):

6. Սուրբ Վարդապետն Յովհան Ոսկերեան բնաւ չդադրիր Ս. Գիրքը կարդալու, մանաւանդ ուշի ուշով անկէ օգուտ քաղելու պարտքը յիշեցնելէ: Պէտք է միշտ խորհիլ, յեղոյեղել, լսել ու խօսիլ այս սրբազան բաները. այսպէսով կը ծնանին մեծա-մեծ ու փրկարար բարիք. Աստուծոյ հաճոյ կ'ըլլանք. մեր միտքն ու բերան ընդու-նայն մտածմունքներէ ու խօսքերէ կը սրբուին. հոգեւոր խօսակցութիւններու կը վար-ժուինք. դիւաց երկիւղալի կ'ըլլանք. շնորհներով կը լեցուինք: Եւ Աստուած ասոր համար տաւաւ մեզ աչք, ականջ ու բերան, որպէս զի մեր բոլոր անդամներն անոր ծառայեն: Ինչպէս մաքուր օդն՝ մարմնոյ, այսպէս և հոգեւոր խորհուրդք՝ հոգեւոր զբօսանք են և պարարիչ զգաստութեան: Իսկ մենք անօգուտ և ստէպ փաստակար ու մեղանշական խօսքեր կը խօսինք. հնար է ոչ ոք կարող է անսխալ սաղմոս մ'ըսել կամ Ս. Գիրքը կամ Քրիստոսի դործերն ու խօսքերը յիշել ու պատմել. մինչդեռ աշխարհային ու ցոփ երգեր ու վէպեր շատերն կը սորվին ու կը պատմեն: Ինչպէս ծուխը կ'արտասու-ուեցնէ աչքերը, իսկ ընտելեան գեղեցկութիւնք առողջ ու քաջատես կ'ընեն, այսպէս և հոգեւոր աչքը կը փաստուի աշխարհի իրաց ծուխէն, և «Ազգի ազգի լալիւս լայցէ ե՛ւ աստ ե՛ւ անդ»: Պէտք կայ ուրեմն Ս. Գրոց հոգեւոր ցօղոյն և խաղաղ օդոց, որ-պէս զի միտքը թօթափելով մտքմաւոր ու սատանայական ծանրութիւնը, վերանայ, թռչի առ Աստուած (Գ. Ա. ճառ Բ.):

7. Եւ աշխարհականի աւելի պէտք է Ս. Գիրքը ստէպ կարդալ քան վանա-կանի. վասն զի ինքն աւելի մեծ վտանդաց մէջ է եւ կազդուրուելու պէտք ունի. ամէն օր կը վերաւորուի, ամէն օր դեղ պէտք է: Չարագոյն ևս է սրբազան բաները աւելորդ համարել քան բնաւ չգիտնալ: Ո՛վ Քրիստոնեայ. խոկա՛ թէ աւելի՞ կը հաճիս արդեօք Սաղմոս մը լսել քան աշխարհային երգ մը. եկեղեցի՞ երթալ կ'ախորժիս թէ թատրոն կամ զբօսավայր մը: Գիտցի՛ր որ հոգեւոր կերակուրն է Աստուծոյ խօսքը: Ս. Գիրքը, երբ չլսես կամ չկարդաս, սով է եւ ապականութիւն. «Տաց նոցա ոչ սով հացի եւ ոչ ծարաւ ցոյ, այլ սով լսելոյ զբանն Տեառն» (Ամոս, Ը. 4): Եթէ մարդու խօսքն ահագին զօրութիւն ունի. որչափ եւս առաւել Աստուծոյ խօսքը, որ կրակէն աւելի զօրաւոր է կակղելու. այրելու եւ մաքրելու: Սատանան է որ կ'արգե-լու զմեզ նայիլ գանձին, որպէս զի չստանանք. կը խափանէ ընթերցումը, որպէս զի չսթափինք եւ աչքերնիս երկինք չվերցնենք: Ս. Օգոստինոսի նման քանին՝ որ այս քաղցը ընթերցումով առ Աստուած դարձան ու սրբացան:

Գ. Վ. ԹԵՐԶԻՊՍՇԵԱՆ

(Շարունակելի)

Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Մ Ե Տ Թ Ա Փ Օ Ր Ը

(Շար.)

Այսպէս թափօրը վեհօրէն անցնելով Պուսկրլաձէ, Պուրկրիկէ, Յրէ-
րա Ռիկէ եւ Ֆրանձ ԵօգեՖ Քայէ հասաւ Ս. Ստեփանոս Մայր Եկե-
ղեցին, ուր Ն. Վեհափառութեան ընդ առաջ ելան Վսեմաշուք Կարդ.
Պատուիրակ, Կարդ. Նալկ կղերիկոսներու դասով միասին:

Կայսրն ու Իշխանները օրհնեալ ջուրն առնելով ուղղուեցան դէպի
Աւագ խորան ու գրաւեցին իրենց համար յատկապէս պատրաստուած
տեղը՝ Աւետարանի կողմը. մինչ Կարդինալները, Արքեպիսկոպոսներն ու
Եպիսկոպոսներն անցան միւս կողմը:

Մտնա. Բիշուկէր զուրցեց Թիւ Պատարազը, որմէ վերջ Պատուիրակ
Կարդինալը թագ ու շուրջառ դրած՝ առաւ Սրբութիւն Սրբոցը, որ յոյժ
թանկագին ճաճանչի մը մէջ էր դրուած, սկսաւ թափօր շրջիլ հնօրեայ
եկեղեցւոյ կամարներուն ներքեւ: Եւ երբ թափօրը հասաւ դրան առջեւ,
Կարդինալը ետին դառնալով օրհնեց ներկայներն ու զուրս հրապարակ
ելաւ իսկոյն:

Հոն պատրաստ կը կենար Ս. Սրբոցը տանելու շքակառքը, ուր
մասն Կարդինալ Պատուիրակն ու Կարդ. Նալկ: Կառքին մէջ յատկապէս
պատրաստուած բարձրադիր տեղը դրուեցաւ Ս. Խորհուրդը, մինչ իրենք
ծնրադիր կեցան անոր առջեւ:

Ուխտ սեւազգի զուտ հոովմէական ցեղէ երիվարներ լծուած էին
շքակառքին, ոսկեհուռ բանուած համակ սպիտակ ասպազէններով զար-
դարուն, եւ որոնց ճակատը խոշոր փետուրներով պծնուած էին: Զախա-
կողմի չորս ձիաններու վրայ հեծած էին մանկլաւիկներ՝ ոսկեթել բան-
ուած սպիտակ տարազներով:

Շքակառքին շուրջը չապկազգեստ երգեցիկ մանուկներ կը խնկարե-
կէին արծաթ բուրվառներով. ուրիշներ արծաթեայ զանգակիկներ կը
հնչեցնէին:

Ս. Հաղորդութեան շքակառքին առջեւէն կ'երթային կայսերական
թափօրը, մանկլաւիկները, սենեկապետները, ներքին խորհրդականները
եւ բոլոր միւս խումբերը՝ որոնք հետեւած էին թափօրին առաջին շք-
շանին:

Յետոյ կու գային, կէս շքակառք մը չորս ձիերէ լծուած Պատուիրակ Կարդինալին հետեւորդներով:

Վեց շքեղ շքակառքեր՝ չորսական ձիերէ լծուած, քսանչորս Արքեպիսկոպոսներով:

Վեց ուրիշ շքակառքեր՝ վեցական ձիերէ լծուած, տասներկու Կարդինալներով:

Հազիւ Ս. Հաղորդութեան փառաւոր գահոյակառքը շարժիլ սկսաւ, կայսերական թափօրն իսկոյն սկսաւ երեւալ սապէս կազմուած. Նախ կայսերական շքակառքը՝ ուր կային Կայսրը եւ Գահաժառանգ Արհիդուքս Ֆրէտէրիք, որու կ'ուղեկցէին թիկնապահ զօրաց երկու վաշտեր:

Տասներկու այլ շքակառքեր՝ Արհիդուքսերու եւ Արհիդուքսուհիներու յատկացուած:

Տասներկու կէս շքակառքեր՝ հետեւորդներուն համար,

Եւ այս ամէնուն հետեւէն կայսերական թիկնապահ զօրաց տիգաւորներէն վաշտ մը:

Սոյն շքեղ թափօրն այսպէս կազմուած՝ վեհօրէն անցաւ Ֆրանց Եօզեֆ Բայի, Բայզեր Վիեհէլմ Ռիմկ, Օբեռն Ռիմկ, Պուրկ Ռիմկ պողոտաներէն եւ Պուրկ հրապարակէն՝ ուղղակի դնաց Պուրկ ու կահգ առաւ գեղակերտ սանդուղներուն առջեւ:

Հոս եկեղեցական թափօր մը կազմուելով՝ Պատուիրակ Կարդինալը վար իջաւ շքակառքէն ու ձեռքովը փոխադրեց Ս. Սրբոցը մինչեւ Կայսերական Մատուռն ու տապանակին մէջ դրաւ դաջն:

Եւ սկսան ցրուիլ թափօրականք:

Արհիդուքսերը, Կարդինալները, Արքեպիսկոպոսներն ու բոլոր հանդիսականներն իրենց կառքերով մեկնեցան իրենց տեղերը:

Հոս հաւաքուած բազմութեան խանդավառութիւնը անսկարագրելի էր թափօրէն վերջ: Եւ թէպէտ իւրաքանչիւր խմբապետ յանձնարարած էր երբէք ժխտալից ցոյցեր չընելու՝ բայց ստէպ ստէպ որոտընդոտ ծափեր ու կեցցէներ դուրս կը պոսթկային ակամայ բազմութեան կուրծքերէն: Ամբոխը Ս. Հաղորդութեան հանգէպ իր երկրպագալից յարգանքներն ընելէ վերջ, կեցցէներով կը թնդացնէր օդը Կայսեր ուղղուած, չորս որ խի'ստ յուզուած շնորհակալ կ'ըլլար անոնց:

Ս. Հաղորդութեան թափօրի վեհութիւնը կը քառասպատկուէր մահաւանդ, Վիեննայի բոլոր եկեղեցիներու զանգակներուն միահամուռ զօղանչելէն եւ վայրկեանը անդամ մը ամենուստեք արձակուած հրետանիներու պոռումներէն:

Ս. Հաղորդութեան շքակառքը երբ Պուրկ Թօր ժամանեց, հոն հոծ հաւաքուած հազարաւոր ժողովուրդները մէկէն յարգալից գետին խոնարհեցան ծունկի գալով: Քիչ յետոյ լսուեցաւ կորուկ զինեւորական հրաման մը — զէնք ի ձեռքն —, այն ատեն անսկարագրելի էր ամբո-

խին արտայայտած գոհութեան եւ հրճուալից ցոյցերը: Սուսմէ խումբ կը ծաւալէին, արձագանգ կը գտնէին ամէն լեզուէ գոչեր, որոնք երկարելով, աճելով, ուռելով ծովածուփ կոհակներու յորուցած խուլ ու խոր ազմուկին կը նմանէին:

Այն պահուն բոլոր զինուորական նուագախումբերն սկսան հնչեցնել աւստրիական ազգային քայլերգը, խանդավառութիւնը այլ եւս հասած էր այն ատեն խելագարութեան աստիճանին:

Յանպարտաստից հոն դուրս ժայթքեց ամէնէն վեհափառ ցոյցը Կայսեր հանդէպ: Բարձրադիր նստարաններէ, պատուհաններէ, պատշգամբներէ, տանիքներէ, փողոցներու մէջ ամէն կողմերէ խնդութեան ազմուկ մը ծայր տուաւ, ողջոյններ, մաղթանքներ էին ուղղուած սրտագին՝ այն ալէզարդ Վեհապետին՝ որ այսպէս արքայական շուքով կը պատուէր Գոհութեան Ս. Սորհուրդը:

Հազիւ թէ վերջին շքակառքը Պուրկի լայնատարած գաւթէն ներս մտած էր, ժողովուրդին ահագին զանգուածը, դեռ չցրուած, միահամուռ սկսաւ երգել կայսերական քայլերգն եւ այս շեշտերով վերջ գտաւ հանդէսը, անմոռանալի հետք մը թողլով սրտերու մէջ, հետքը բորբոքուն հաւատքի եւ անկեղծիք աստուածապաշտութեան:

(Թարգմ.) Ա.Լ. Վ. ՍԻՐՈՒՆԵԱՆ

ԱՐԳԻԼԵԱԼ ԹԵՐԹԻՆ ԱՆՃԵԴԵԴ ՄԵԿ ՅՕԴՈՒԱԾԸ

Մեծմուա ըսուած թերթն, որուն ընթերցումը իւր անորակելի, անխիղճ եւ ապերասան հրատարակութեանց համար օրինաւոր հոգեւորական Իշխանութեան պաշտօնապէս արգիլուած է կաթողիկէ հաւատացեալներուն, պիտի չըլլար երբէք առարկայ մեր մասնաւոր ուշադրութեան. վասն զի վստահ եմք որ ճշմարիտ կաթողիկեայք այդպիսի մոլորամիտ թերթ մը ընաւ չպիտի կարդան՝ իրենց խիղճը չարատաւորելու համար. եւ եթէ ունի մի քանի ընթերցողներ, անոնք ալ անոր մոլորութեան եւ ընթացքին կամակիցներն են միայն, որոնք միանգամայն ամբարտաւանութեամբ կ'ըմբռստանան ո եւ է հոգեւոր Իշխանութեան հրամանաց դէմ:

Սակայն այնպիսի պարագաներ կան որ կը ստիպեն պատասխանել մոլորութեանց՝ մինչեւ իսկ ամէն սրբութիւններն ուրացողներուն, թէ՛ ընդհանրութիւնը զգուշացնելու եւ թէ՛ մոլորութիւնը խայտառակելու համար. նոյնպէս ցոյց տալու համար թէ ամէն կաթողիկէ եւ ըսողն եւ

քարոզողը կաթողիկէ չէ. «Ոչ ամենայն ուր ասէ ցիւ՝ Տէ՛ք, Տէ՛ր, մեցէ յարձանգսքիս երկնից» (Մատթ. է. 21—23).— Մեր պարտքն է գրել եւ գլուշացնել. գուցէ օգտուին. յամենայն դէպս մենք պարտապան չմնանք: Այս է տհա Աստուծոյ պատուիրանն առ Մարգարէն, երբ ըսաւ անոր. «Որդի՛ մարդոյ, գէտ կացուցի գեեգ». եւ հրամայեց անոր կրցածին չափ աղաղակել ճշմարտութիւնն, Աստուծոյ խօսքը. զի եթէ ինք չըսէ, եւ մարդիկ կորուսին, անոնց արիւնը իր ձեռքէն պիտի պահանջէ. «Ձաւիւն և ոցա ի ձեռաց քոց խնդրեցից». իսկ եթէ ինք խօսի եւ անոնք մտիկ չընեն եւ կորուսին, ինք իր հոգին պիտի վերկէ եւ անոնց կորուստին համար պարտապան չպիտի մնայ առաջի Աստուծոյ: (Եզեկ. Գ. 1)

Արդ այդ մայրեալ թերթին 5037 թիւին մէջ առաջնորդող յօդուած մը կար Ք. ստորագրութեամբ, յորում իր սովորական անարգանքներէն, լուստանքներէն եւ անիրաւութիւններէ զատ, բացարձակ մոլորութիւն եւ հերետիկոսութիւն եւս բովանդակուած է. զայն համառօտիւ պիտի ջրլինք: Այս յօդուածը բացայայտօրէն պրուած է իրօք կամ մօտօք ուրաջողէ մը, եթէ ոչ բացարձակ բանապաշտէ կամ անկրօնէ մը. զի այդ պիտի յօդուած գրող մը չկրնար բնաւ ուղղափառ կամ կաթողիկէ տիտղոսիւ պանծալ կամ անոր արժանանալ: Յաւով կ'ընենք թէ այսպիսի թերթէ մը ուրիշ բան չէր կրնար ակնկալուիլ, եթէ ոչ հիւրընկալել սոյնպիսի յօդուածներ: Ո՛րքան ստոյգ է եղեր Ս. Եկեղեցւոյ Վարդապետներուն եւ Աստուածաբաններուն այն խօսքը թէ՛ կաթողիկէ մը որ հոգեւորական Գերագոյն Իշխանութեան տուած բացայայտ վճռոյն չանսար ո՛չ միայն հերձուածող կ'ըլլայ, այլ՝ բանադրուելէն վերջը, եթէ բանադրանքի մէջ անհոգ եւ անտարբեր յարասեւելու ըլլայ տարի մը, չկրնար հետեցիկոսութեան կասկածէն զերծ մնալ. անոր համար որ այդ Գերագոյն աստուածադիր Իշխանութիւնը կ'արհամարհէ: Սակայն ուրիշ վարդապետական հերետիկոսութիւններու մէջ ալ կրնայ եղեր գլորիլ, ինչպէս նաեւ տեսուեցաւ յոյն պատրիարքարանի այցելուաց տոմարին մէջ պատճառաւ արձանագրուած հակակաթողիկէ դաւանութենէն: Իսկ այդ պատճառաւ արձանագրուած հակակաթողիկէ դաւանութենէն, իսկ այդ արգիլեալ եւ մոլորեալ թերթին մէջ հիւրընկալուած չարաչար յօդուածին մէջ նոր եւ աւելի ցայտուն եւ կարկառուն եւ աւելի խկատիւ եւ անեղ ինքնապատուութիւն մըն ալ պարունակուած է, Վոլքեռական շնականուած թեամբ: Ըսել է թէ այն արգիլեալ թերթն ալ հետեցիկոս է. զի «Գողն եւ գողակիցն ի նմին պատժի են»: Ահա այդ թերթն է որ վարչական ըսուած ժողովէն հինգ ոսկի ամսավճար կ'ընդունի եղեր, իբրեւ իրեն պաշտօնական օրկանը. եւ այդ ժողովն էր որ կը համարձակէր քննադատել եկեղեցականաց մատակարարութիւնը իբր զեղծարար !? ... եւ թէ իրենք անքննադատելի կերպով պիտի մատակարարէին ?! ... եւ պէտք է զիտնալ եւս թէ հերձուածող եւ հերետիկոս թերթի մը չնորհուած այդ գրամը եկեղեցիներու մուտքէն կը վճարուի. ինչպէս չիշել Բրիտանի խօսքը տաճարապիղծներուն ուղղուած. Մատթ. ԻԱ, 13:

Ա. Արդ՝ այս յօշուածին մէջ կայ հետեւեալ կտորը .

« Կարողիկոսի պարսն է անյեղի պանել ազգային ծեսեր եւ արարողութիւններ, եւ խորիլ ո՛ր եւ է նորամուտ սովորութիւններէ, եւ ո՛չ թէ Թէրգեանի պէս եկեղեցիներ «նա-
նապարհ խաչի»ի պատկերներով եւ Սիրս Յիսուսի եւ Աստուածածնայ արձաններով խնդել:
Ճանապարհ խաչին Քաբուլինաց Միաբանութենէն հնարուած ջերմեանդութիւն մ'է:
ամէն մարդ պարտաւոր չէ այս ջերմեանդութեան հետեւելու, եւ կամ ամէն եկեղեցի
պարտաւոր չէ անոր պատկերները պատերուն վրայ կախելու »:

Նախ կը շփոթէ խնդիրները, բնականաբար զիւրաւ խարել կարե-
նալու համար: Ծես, արարողութիւն, սովորութիւն, ջերմեանդութիւն,
խառն ի խուռն կը դրուին: Բնական է որ Պատրիարք կամ Սինոդ չի
կրնար ծեսը փոխել. զայս խստիւ հրամայած է Ս. Աթոռը: Անոր համար
ի սկզբանէ անտի մեր՝ Հայ-Կաթողիկէիցս ծեսը հայկականն է եւ միշտ
այնպէս պիտի մնայ: — Իսկ արարողութիւնները, որոնք ծեսին կատար-
ման մանրամասնութիւններն են, դարձեալ ըստ քմահաճոյից ոչ ոք կըր-
նայ փոխել. զայս եւս այսպէս կը հրամայէ Ս. Աթոռը: — Պէտք է զի-
տէք որ մենք կը յենունք, իբրեւ Կաթողիկէ, Ս. Աթոռոյ հրամանաց
վրայ, որ զբականապէս եւ ուղղակի աստուածատուր իշխանութիւն
ունի մէն մի եկեղեցեաց վրայ, ինչպէս եւ անհատներու: Սակայն արա-
րողութեանց ո՛չ էական մասերը կրնան երբեմն Սինոդական որոշողու-
թեամբ փոփոխութիւն մը կրել՝ միտք ի բարին հաւատոյ եւ կրօնից եւ
ծիսի:

Պէտք է գիտնայ սակայն ամէն ոք թէ, այսքան խստապահանջ եւ
բծախնդիր նախանձախնդրութիւնն՝ ծէսի եւ արարողութեանց մասին,
անոր համար կը գտնուի Հայ-Կաթողիկէ եկեղեցւոյն մէջ, որովհետեւ
Հոռովմայ Ս. Աթոռոյն հետ միացած է: Ապա թէ ոչ, հերձուածող էջ-
միածնական եկեղեցին հայոց, այնքան յոխորտացող պահպանողական,
բնաւ չիղճեր ոչ միայն փոփոխելու, այլ նոյն իսկ ուրանալու Հայ-Ուղ-
ղափառ եկեղեցւոյ ճշմարտութիւնները. իր անուսումն կամ թեթեւա-
կրօն եկեղեցականներուն, Եպիսկոպոսներուն, Պատրիարքներուն, Կաթո-
ղիկոսներուն ձեռքին մէջ խաղալիկ դարձած է կրօնքը. ամէն զիրք
Գրիստոնէականի՝ տարբերութիւն ունի վարդապետութեանց մէջ. մէն
մի Եպիսկոպոս կամ Վարդապետ կ'ուրանայ ճշմարտութիւնները, մին
Վերափոխումը, միւսը Անարատ Յղութիւնը. մին կը հայհոյէ Ս. Խաչը,
միւսը՝ Դոյաջափոխութիւնը. ըստ քմաց անլուր ամուսնալուծութիւններ
կը վճռեն, հակառակ Ս. Աւետարանի, նորամուտ մոլորութիւններով.
Թո՛ղ անուա քահանայից հանապազօր կատարած անհեթեթութիւնները՝
Ս. Խորհրդոց մասին, քստմենի անտարբերութեամբ. եւ ո՞ր հոգեւոր իշ-
խանութիւնն է որ կը հսկէ ի պաշտօնէ. եւ ո՛չ մի. Աւերած ի տեղւոջն
սրբութեան: Պահպանողականութիւն մը՝ բոլորովին նիւթական, լի կրիւք
եւ մոլորութեամբ: «Դուք ընդէ՛ր անցանէք զպատուիրանաւն Աստուծոյ
վասն ձերոյ աւանդութեանն» (Մատթ. ԺԵ. 3):

Ճշմարիտ պահպանեն հայ ծիսի եւ արարողութեանց՝ է եւ կը մնայ
Կաթողիկէ եկեղեցին :

Իսկ սովորութեանց գալով, ո՛չ ոք կրնայ երբեք արգելուլ բարի եւ
գովելի սովորութիւն մը ընդունիլը . քանզի ամէն լաւութիւն յառաջ-
դիմական է : Հայ եկեղեցին ի սկզբանէ անտի յարարողական իսկ այս
ոգևով վարուած է . ապա թէ ոչ ինչո՞ւ իր Պատարագին մէջ անո՞ժ է
ասորի եւ յոյն եկեղեցիներու եւ Հարց աղօթքներն եւ ծիսականարու-
թիւնները . նոյնը չէ՞ միթէ նաեւ միւս խորհրդոց մատակարարութեան
մէջ ալ . ինչո՞ւ այսօր իսկ էջմիածնականաց Եպիսկոպոսները, Պատրիար-
քն ու Կաթողիկոսը կը կրեն Հռովմէական Խոյր (միթր), Հռովմէական
Դաւազան (Crosse), եւն . , եւն . : Եթէ այդ այդպէս է, ո՞վ է այն իշ-
խանականն որ կարող պիտի ըլլայ արգելուլ ընդգրկել բարի սովորու-
թիւն մը, օգտակար ջերմեռանդութիւն մը, մանաւանդ որ ասոնք արա-
րողականին բնաւ մեծա մը չեն բերեր . ո՞ր կաթողիկէն պիտի համար-
ձակի դատապարտել զայս : Եւ չգործեր բնաւ սուտ միտք փաստաբանել՝
պատճառելով թէ որո՞ւ գիւտ է այս ինչ կամ այն ինչ ջերմեռանդու-
թիւնն . ատ չէ խնդրոյն էական մասը . այլ այն է թէ Ս . Կաթողիկէ
Հռովմէական եկեղեցին ընդունած է թէ ոչ այդ ջերմեռանդութիւնը .
եթէ ընդունած է, այլ եւս մահկանացուի մը՝ որ կաթողիկէ ըլլայ, թոյլ
չտրուիր անոր դէմ խօսիլ կամ ծաղրել, կամ արգելուլ ո՛ր եւ է կաթողիկէ
մէկը՝ զայն գործածել : Իրաւ է որ՝ «Ամեն մարդ ՊԱՐՏԱԻՈՐ չէ այս
ջերմեռանդութեան (հանապարհ-խաչի) հետեւելու . եւ կամ ամեն եկե-
ղեցի պարտաւոր չէ անոր պատկերները պատերուն վրայ կախելու» .
բայց նոյնչափ ստոյգ է թէ՛ 1 . Ոչ ոք իրաւունք ունի ո եւ է կաթողի-
կէի այն ջերմեռանդութեան հետեւիլն արգելելու, եւ թէ՛ 2 . Հոգեւոր
Իշխանութիւնը իր իրաւունքը գործածած կ'ըլլայ այդ ջերմեռանդու-
թիւնը եւ անոր պատկերները կաթողիկէ ժողովրդեան ու եկեղեցեաց
մէջ մուծելու, ուղղուն հետեւի չուզողը չհետեւի . բայց բարի կաթողի-
կէներն միշտ կը հետեւին : Եւ սուտ է նաեւ թէ այս ջերմեռանդու-
թիւններն նորամուտ ըլլան . պէտք է գիտնան թէ Կաթողիկոսական թե-
մերու չափերուն մէջ ի վաղուց կը գործածուին այս տեսակ ջերմեռան-
դութիւններ : Բանի մը Պոլսեցի անտարբերներու կամ մոլորական աղ-
գայնամոլներու կարծիքը նժարը չճօճեցներ : Եւ բնաւ ոյժ չունի Հռովմայ
Պապի իփառներէն յառաջ բերուած օրինակը . անիկայ գրողին ազիտու-
թիւնը կամ մեղմեխ չարամտութիւնը միայն յերեւան կը բերէ :

ԱԿՐՈՂԻԿԷ

(Զարեանակելի)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՆՈՐԱՆԻ ԿԱՅՈՂՆԻԿԷՆ ԱՇԽԱՐՀ


Ամսոյս 26ին Ս. Քահանայապետն մեր Պիոս Ժ. Կարդինալածոցով գումարեց, նորինարար Միքայիլ Երանսէրաց խոյրը դնելու համար, որոնք են Կարդ. Մաթոյ, Վիգոյ, Պաւլէր, Սահմոս եւ Նաիկ:

Ս. Քահանայապետն՝ Կոստ Կղեմէս Տրոսթէ Վէշերլիկի շնորհեց Ռախիմ Մաթիկ» պատուանշանը: Կոմոր աւելի քան ութնամիայ է. Վեթիֆայիոյ առաջնա-կարգ ընտանիքներէն միոյն գլուխն է Գերմանիոյ Կաթողիկէ գործիչներուն քառակոր-դէն հնորեայ վաստակաւոր մըն է:

Նոյեմբեր 15ին հանգեաւ ի Տէր Կարգ. Գարէշէլաթիոյ, Արք. Կապուայ, Մատենադարանապետ Ս. Հովհաննէս Եկեղեցւոյ: Մնած էր ի 1824, Նորդիի վա-ղեմի պատրիկեան ազգատոհմէ մը 1895է ի վեր ծիրանիով պատուաւ էր Կարթ պարգտակ, եւանդուն հովիւ մըն էր, զարմանալի կերպով խոնարհ եւ հեղ թշնամ-եաց ներող, բայց կաթողիկէ սկզբանց համար կը մաքաւէր անվաղ: Ս. Պետրոսի Ա թռուցէ տաճար սէրն ու հպատակութեան ոգին՝ այն երկարատեւ կենաց ընթացքին մէջ երբեք ամենափոքր իսկ նուազում մը չուենցաւ: Իր կորովի գրիւով շնորհքով գեղեցիկ եւ բազմաթիւ — քանի մը տասնեակ — հատորները որոնք շնորհունեքու թարգմանուած են, ամենուն զարմանքը առթած են: Արեւազան գիտութեան և գաւա-կան ընտիր մատենադրութեան գանձեր համարած էր: Եւրոպայ ամէնէն հոյակապ գիտական ու գրական կաճառներն անդամ ահուանեցին զինքը: Բայց միշտ ամեն փոք-բէ գեր ի վերոյ մնաց իր տրծարծուն բարեպաւտութիւնը:

Սան-Տովինիոյ Հանրապետութեան Նախագահ ընտրուեցաւ Արհ. Ընտր-փոս Արքեպ. Նուէլ: Յուսարի է որ բարձրապատիւ եկեղեցականը պիտի խաղաղացնէ իր հայրենիքը, քանի որ իւր չքննող բարեմասնութիւններով արժանացաւ այս բարձր պաշտօնին:

Արհ. Հէթէն, Պելճիոյ մէջ Նամիւրի եպ. և տարիներէ իջեալ Նախագահ մնայուն Յանձնաժողովի Համագգ. Համաժողովի Ս. Հովորդութեան, Հոկտի 25ին Մաթիւ կղզին ուղեւորեցաւ 1913ի Ապրիլ ամսուն մէջ հին կանտորուէիք Ս. Հա-գորդ. Միջնագգային Համաժողովին պատրաստութեան համար կարելի էր քանիք կարգադրելու Տեղոյն Առաջնորդէն սիրալի ընդունելութիւն մը գտաւ: Երբ գործ մը պիտի սկսենայ այն Համաժողովը, կապոյտ ալիքներու մէջ յապարհամիտ փաշտոյ եւ իր նարնջեմի և այլ գեղազէր և բնութամաւէտ բուրաստմաներով և ճողկեմեղ-նեղով յուէն հապուրատենէ կղզիին մէջ համախմբով տեղերքի կաթողիկէ հա-ւատացեալները ի պաշտումն և ի փառաւորութիւն խորաններու Զոհն և անուանող մարդուն ճշմարտապէս սրտակից բարեկամ ու բարեբարը Փրկչին ի Ս. Խորհրդեան Գո-հնութեան:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Անցեալ Կիրակի, ամսոյս 8, Աւագ Թեմիս բոլոր եկեղեցեաց և Վիճակներուն մէջ, նաեւ Իզնիմիտ, Պաղչէճիք, Պիլէճիք և Պանտրմա (Զմիւռնիա արդէն կը դործածէ) պաշտօնապէս հրատարակուեցաւ Ամեն. և Գերերջ. Հոգեւոր Տեառն մերոյ Կոնգակը նոր Տոմարի գործածութեան վերաբերեալ, զոր կը պարտադրէ: Սոյն Կոնգակը, իր կարեւորութեան տեսակէտով, կը դնենք այսօր մեր Թերթին մէջ իւր ամբողջութեամբ, և գալ Թուով պիտի տանք նաեւ անոր Թրքերէն Թարգմանութիւնը:

Ոսկերեան եկեղեցւոյն մէջ, յետ հրատարակութեան, քանի մը հոգիք ժողովուելով որահին մէջ, իբրեւ Թէ բողոքեր են և ետ առնուիլը ուղեւով բանագնաց դրկեր են առ Ամենապ. Հոգեւոր Տէր: Սակայն անհնարին ըլլալն իմանալով, զիւրպի մէջ գումարում սարքեր, արտաքոյ կարգի ժողով կոչեր են կառավարութեան դիմելու նպատակով: Զուտ եկեղեցական-բարեկարգական խնդրոյ մը մէջ կառավարութիւնը ինչ միջամտութիւն կրնայ ընել արդեօք: Իսկ քաղաքական գործառնութեանց մասին ամէն ոք աղատ է հին կամ նոր գործածելու, ըստ պատշաճին:— Սակայն Բշ. օր, Տօն Անարատ Յղութեան Ս. Կուսին, Վարչ. բաւած ժողովն և Ոսկերեանի Թաղականք, երգիչներուն արգիլեր են, սպառնալեօք ամսականին կտրելու, մասնակցիլ ժամերգութեանց երգեցողութեան, և միայն վեց քահանայք կատարեր են զայն: Տեսէք այդ աշխարհական մարդիկը. որ եկեղեցական արարողութիւն մը կ'արգիլեն պաշտօնապէս: Հապա կ'ըսէին Թէ մենք հոգեւոր բաներու չենք խառնուիր: Սակայն հակառակ իրենց իրարանցումին, ժողովրդեան անհամեմատ մեծամասնութիւնը շատ քոչ է այս տրամապրութենէն. զոր և ապացուց Բշ. օր, Անարատ Յղութեան տօնին առթիւ, ամէն եկեղեցիներու մէջ տեսնուած յաճախութեամբն հաւատացելոց:

• Գեր. Մինաս Ծ. Վ. Տէր Մինասեան ժողովրդապետ կարգուած է ի Սերասաբիա:— Գեր. Խաչիկ Վ. Սթանասեան հրաման ստացաւ Տ. Կերտէն դպրո ի Պոլիս:

• Յունաց Պատրիարքական նորքնոյր տեղապահ Տէր Եէրմանտի պաշտօնը շնորհաւորելու համար Զրեքշարթի օր Արհի. Յովս. Գեր. Ռոքոսեան՝ Կ. Պ. Փոխանորդ, Գեր. Յակոբ Վ. Մաղարեանի հետ գնացին Ֆէնէրի Պատրիարքարանը, ուր յիշեալ Տեղապահ մեծարանօք և շատ սիրալիլ կերպով ընդունեց զիրենք և պատուեց շքանշան մէջ, և շուրջ քսան վայրկենի մը չափ տեւող մոերմական խօսակցութենէն վերջը մեկնեցան: Գեր. Տեղապահը շատ համակրալից արտայայտութիւններ բերաւ Ամենապ. և Գերերջ. Հոգեւոր Տիրոջ մասին և անոր եկեղեցականի վայել կորովն ու հաստատամտութիւնը գրուատեց և Հռովմայ դէմ մղուած մաքառումը դարովեց և մազթեց այս տաժանելի և անիրաւ հակառակութեանց ի մօտոյ հարթուելը և խնդրեց որ իր յարգալիլ սիրոյ ողջոյնը մատուցանեն Հայ Կաթողիկէ հաստատամիտ Պատրիարքին:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Հատուկեան բանակցութիւնները պիտի կատարուին ի Լոնտոն, ուր արդէն գնացին երեք զաշնակից և զինադադարը կնքող տէրութեանց պատուիրակները: Իսկ Օսմանեան Պատուիրակութեան անգամները՝ երկրագործական նախարար Բեշիա փաշա, Պերինի դեսպան Օսման Նիզամի փաշա, ծովային նախարարի փոխանորդ Սալիհ փաշա ինչպէս նաեւ զնդապէտ Ալի Րիզա, Րէշիտ Սաֆվէթ պէյերը Գշ. օր մայրաքաղաքէս մեկնեցան ռուսական շոգենաւով: Ողջերթի եկած էին կալսերական պալատան Բ. արարողապետ Րէշիտ պէյ, Նազրմ փաշա, անգլիական և աւստրիական գեսպանները եւն. եւն.: Օսմանեան պատուիրակները, Ուրբաթ իրիկուն հասած պիտի բլլան Լոնտոն: Այսօր՝ Շաբաթ, քողոր պատուիրակները իրարու պիտի ներկայացունին, կիրակի օր հանգիստ պիտի բնեն, իսկ երկուշաբթի առտու պիտի սկսին բանակցութեանց: Հէքէն պատուիրակները եւս գլխաւորութեամբ Մ. Վէնիգեյտսի արդէն խզմեկնած են:

✱ Արդէն թերթերը թէ արտաքին գործերու նախարարութեան խորհրդական Յովհ. պէյ Գուլումեան տէրութեանց հաւանութեամբ կառավարիչ տնտեսուած է Լիբանանի Այս առթիւ Գուլումեան էֆ. բարձրացած է վեզիրութեան աստիճանին: Լիբանանի բրոզոգօլը մէկ քանի օրէն պիտի ստորագրուի պետութեանց կողմէ:

✱ Ալպանիոյ անկախութիւն շնորհուած է Վալսերական կառավարութեան կողմէ:

✱ Էտիրնէի հրամանատար Շիւքրի փաշայի բաց ի Ղազիութեան տիրութեն, Օսմանիէ մեծ պատուանշանը արուեցաւ: Եմնեայի և Շքոսրայի հրամանատարներն ալ Ղազիութեան տիրոջով Մէճիսիէի առաջին կարգը ստացան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Ամերիկայի միացեալ Նահանգներու Նախագահ ընտրուեցաւ Պ. Ուիլսոն՝ հաւկառակ Րուզվելթի և Թաֆթի: Ուիլսոն գամկապետական է: Մեծ է ի Վիրժինիա 1851 և փաստաբան և բրոֆէսոր եղաւ պատմութեան և քաղաքական քննիչութեան: Բերնսէյթի Համալսարանին Մեծափառ Վարիչ պաշտօնը կատարեց ութ տարի: Կաճեալի կառավարիչ էր երկու տարիէ ի վեր: Հայրենակից է Մ. Նահանգաց երեւելի նախագահներուն՝ Ուոշինկթընի, Մէտիսոնի և Մոնրոէի որ 1823ի իւր նշանաւոր յայտարարութեամբ կ'արգելուր Եւրոպացւոց հող գրաւել յԱմերիկայ: Այս ընտրութեամբ Ռամկապետական կուսակցութիւնը 50 տարիէ ի վեր երրորդ անգամ է որ վարչութիւնը ձեռք կը ձգէ: յոյս կը յայտնեն որ Ուիլսոնի նախագահութեան օրով Ուոշինկթընի Վաշինտոնիին և Սպիտակ Տան յարկին ներքեւ պիտի ընչեն պարկեշտու:

թիւն. արդարաւորութիւն և անկեղծութիւն: Ուրիշն ըսած է. «Ես յաղթանակի զգացումը չունիմ, այլ միայն ծանր պատասխանատուութեան մը»:

Ն. Սպանիոյ նոր Վարչապետ անուանուեցաւ Բոմանոնէս, փոխանակ Վալաճանաձ Գանալէխասի: Նոյեմբ. 12ին 27 տարեկան յայտնի անիշխանական (անաբիսթ) մը՝ Մանուէլ Քարտինաս, վեցհարուածեանի երեք գնդակով սպաննեց նախարարապետ Փանալէխասը, երբ սա հետիտան կ'երթար Ներքին գործոց նախարարութիւնը, հոն նախագահելու համար նախարարաց Խորհրդոյն: Մահը վայրկեանական եղած է: Արհի Եպ. Վերջին կրօնական արարողութիւնները և աղօթքները կատարեց: Մարդասպանը ձերբակալուեցաւ և իսկոյն անձնասպան եղաւ: Վալաճանեայ նախարարապետին մարմինը ցուցադրուեցաւ նախարարութեան մեծ դահլիճին մէջ, ուր անմիջապէս եկաւ՝ կարի յուզեալ, Սպանիոյ թագաւորը՝ Ալփոնսոս Ժ. Գ. և մարմնոյն առջև կարճ աղօթք մը ընելով մեկնեցաւ, հետիտան, անցնելով ամբոխին մէջէն որ կ'աղաղակէր. «կեցցէ՛ անվեհեր քաղաւորն»: Արքայական հրամանաւ Փանալէխաս թաղուեցաւ Հոյակապ Արանց Պանթէոնին մէջ:

Փանալէխաս եթէ ոչ Քրանմասոն, գոնէ Լօժերուն մեծ բարեկամն ու ձեռնտուն եղած է: Եկեղեցւոյ ու Պետութեան բաժանումին, մտնաւանդ կրօնաւորական Միաբանութեանց վարարումին համար աղետալի օրէնքներ պատրաստեց, որոնք սակայն չի քուէարկուեցան: Կաթողիկէ Սպանիոյ նախարարութեան և Ժողովրդեան բուռն ընդդիմութեան շնորհիւ: Մարտիտի Ս. Հաղորդութեան Համաժողովը մեծ փոփոխութիւն և վերադարձ մը յառաջ բերաւ: Տին բարեպաշտութեան՝ բովանդակ Սպանիոյ մէջ: Մեծ թափօրին մէջ էր որ թագաւորին հրամանաւ Փանալէխաս ալ իւր նախարարներով ջահակիր եղաւ Ամենասուրբ Հաղորդութեան երկնաւոր թագաւորին առջև: Այն օրէն իր ոգին ա'լ աւելի ամոքած էր: Հանդիպած ըլլալ Աստուծոյ անսահման գթութեան:

Թագաւորը ներկայ գտնուեցաւ նաեւ յուղարկաւորութեան, նոյնպէս առարկայ ըլլալով Ժողովրդեան խանդավառ կեցցէնէրուն և ծափերուն:

Ս. Փահանջապետը այս առթիւ իր ցաւակցութիւններն հեռագրաւ ներկայացուց թագաւորին՝ իւր Սպանիոյ մայրաքաղաքին մէջ գտնուող դեսպանին՝ Կարդ. Վիգոյի միջոցաւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական Կոնդակ Նոր Տումարի վրայ	705
Տեր Կոմիսսս Փահանայ	714
Աւետարանի մեկնութիւն	717
Ս. Հաղորդ. Համագգ. Համաժողով ի վիճեցա	719
Արգիլեալ քերթին անհեղեղ մեկ յողուածը	721
Տեղեկագրական	725

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎԶ. Ծ. Վ. ԿԷՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԿՐԱՊԵՏ
ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Արձագանգ Շարաքերի, Քեա, Պայրամ փողոց բիւծ Կ. Պոլիս



Թերթիս երկրորդ տարին պիտի աւարտի յառաջիկայ Դեկտեմբեր 31ին, ու երրորդ տարւոյն պիտի թեւակոխէ 1913 Յունուար 1ին, աւելի խնամուած եւ աւելի նոյս բովանդակութեամբ:

Բաժանորդագրութեան պայմաններն անփոփոխ կը մնան. հետեւապէս կը հրաւիրենք փութաֆողները որ փութան բաժանորդ գրուիլ մինչեւ ց1 Յունուար: Իսկ անոնք որ արդէն գրուած են, իրենց պայմանաժամը չլրացած կը պարտին նորոգել իրենց բաժանորդութիւնը:

Պատեն առիթ կը ներկայանայ մեզ հրապարակաւ յայտնելու մեր խորին շնորհակալիքն ամէն այն բարեացակամ անձերու, որոնք այս տարուան շրջանին մէջ հանեցան գրաւոր թէ բերանացի թերթիս նկատմամբ իրենց դուռնաւորաց գոհունակութիւնն, խնդակցութիւնը եւ նոյնին շարունակութեան համար խրախոյս եւ մաղթանքներ յայտնել: Կը վստահացնենք զիրենք որ բնաւ պիտի չխնայուի ու եւ իցէ զոհողութիւն՝ այս գերազանցապէս լուրջ եւ հաստատ կաթողիկէ սկզբունքներու ծառայող թերթս միշտ աւելի օգտակար ընծայելու մեր սիրելի հասարակութեան: Կը խնդրուի փոխադարձաբար մէն մի նշմարիտ կաթողիկէ անհատ իւրովսանն աշխատիլ *Արձագանգի* ծաւալումին:

Հրատարակուեցաւ «Տարրական սկզբունք Բրիտանական Վարդապետութեան, փոքրիկ տպարան համար, հաստատեալ Հոգեւոր իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ Հայ-Կաթողիկէ հասարակութեանն ամեն դպրոցներուն մէջ»: Կցուած են առօրեայ հարկաւոր աղօթքները: Բաղկացած է 136 էջերէ:

Բովանդակութեան լուրջ, սեղմեալ եւ պարզ ոճովն շնորհիւ դժբաղակամներու ամենեւնի օգտակար եւ յանձնարարելի գրքոյկ մըն է անհրաժեշտ:

Դիմը անհամեմատ կերպով ածան է. ամուր քղրակագմը՝ 2 դանեկան միայն:

Դիմել՝ Կ. Պոլիս, Բերա, Պայրամ փողոց թիւ 5:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բարձրից համար սարեկան	Դիկն. արծ.	40
Վեցամսեայ	» »	20
Արսասահման	Տարեկան Ծրակ	10
	Վեցամսեայ »	5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա Բոսով
եւ կամ մէյ մէկ դրուեցնց նամակադրեմով

Մէկ թիւ 1 Դանեկան

Նամակ, յօդուած եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին

Կ Ա Ք Ո Ղ Ի Կ Է Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Գ

Բերա, Պայրաւ փողոց թիւ 5

Կ. Պոլիս

KATOGHIGHE ARZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹ՝ 1.— Արձագանգ կը նրասարակուի Շաբաթ օրերը:

2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ [կամ [նոյնու-
թեամբ նրասարակել իրեն դրկուած ո եւ [է յօդուած: ~~...~~

3.— Կեղծանունով դրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի
իր իսկական անունը ծանուցանել խմբագրութեան: ~~...~~

4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած չլլան քոլորքին
մէկ կողմը միայն:

6.— Ծանուցանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կաւ
սարնին:

7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրաժեշտ երկու
դանեկանի նամակադրեմ ի միասին դրկել: